

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ս. ԱԹՈՈ, ԵՐՈՒՍԱՂԷՄ

1-2 ՄԱՅԻՍ, 2018

1-2 Մայիս, 2018-ին, առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարքարանի Խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովի 9-րդ նիստը: Ժողովը բացաւ Պատրիարք Սրբազան Հայրը, Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան «Իմաստութիւն Հօր Յիսուս» աղօթքով: Ատենանք բացուեցաւ վերոյիշեալ ժամուն նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, Ս. Աթոռ գտնուող 25 Միաբան եղբայրներէն 24-ի ներկայութեան:

Որպէս օրակարգ ներկայացուած էր

- Միաբանական Ընդհանուր Ժողովի դիւանի անդամոց ընտրութիւն
- Տնօրէն Ժողովի հինգ դադարեալ անդամներու ընտրութիւն
- Համարատուութիւն Տնօրէն Ժողովի
- Տեղեկատուութիւն Կրօնական Ատենանի
- Հաշուէտուութիւնք

Նախագահ Սրբազանը շնորհակալութիւն յայտնելով ներկայ դիւանի գործունէութեան, առժամեայ Ատենապետ նշանակեց Հոգեշնորհ Տ. Ասպետ Վարդապետ Պալեանը և առժամեայ Ատենադպիր նշանակեց Հոգեշնորհ Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեանը:

Նոր երկու տարուայ շրջանի համար իբր Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւան հետեւեալները ընտրուեցան՝

Տ. Բարսեղ Վարդապետ Գալէմտէրեան	Ա. Ատենապետ
Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեան	Բ. Ատենապետ
Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեան	Ա. Ատենադպիր
Տ. Աղան Աբեղայ Գոգչեան	Բ. Ատենադպիր

Առժամեայ Ատենապետ Հոգեշնորհ Տ. Ասպետ Վարդապետ Պալեան շնորհաւորելով նորընտիր Դիւանի անդամները, հրաւիրեց Ատենապետ Հոգեշնորհ Տ. Բարսեղ Վարդապետ Գալէմտէրեանը վարելու Միաբանական Ընդհանուր Ժողովի 9-րդ նիստը՝ ատենադպրութեամբ Ա. Ատենադպիր Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեանի և Բ. Ատենադպիր Հոգեշնորհ Տ. Աղան Աբեղայ Գոգչեանի:

Գաղտնի քուէարկութեամբ քուէից բացարձակ մեծամասնութեամբ Տնօրէն Ժողովոյ անդամ ընտրուեցան.

Տ. Համբարձում Վարդապետ Քէշիշեան

Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեան

Տ. Ղեւոնդ Վարդապետ Յովհաննիսեան

Տ. Կորին Վարդապետ Բաղդասարեան

Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեան

Միաբանական Ժողովի դիւանը շնորհաւորեց անոնց ընտրութիւնը և անցաւ օրակարգի միւս կէտերուն:

Նախ ներկայացուեցաւ Տնօրէն Ժողովի տեղեկատուութիւնը, ապա 2016-2017 տարիներու հաշուետուութիւնը և 2018 և 2019 տարիներու նախահաշիւները:

Միաբան Հայրեր բժախնդրօրէն քննարկեցին Տնօրէն Ժողովոյ, Կալուածոց եւ Ելեւմտից Տեսչութեան տեղեկատուութիւններն ու հաշուետուութիւնները:

Միաբանական Ընդհանուր Ժողովը գնահատանքով ընդունեց Տնօրէն Ժողովոյ և Ելեւմտից Տեսչութեան տեղեկատուութիւնը և վաւերացուց 2016-2017 տարիներու հաշուետուութիւնը:

Միաբանական Ընդհանուր Ժողովը իր աւարտին հասաւ Զորեքշաբթի 2 Մայիս, 2018-ին, երեկոյեան:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնելով բոլոր Միաբան Հայրերուն և Միաբանական Ընդհանուր Ժողովի Դիւանին, շնորհաւորեց Տնօրէն Ժողովի նորընտիր անդամներուն և յաջողութիւն մաղթեց:

Միաբանական Ընդհանուր Ժողովի Զ-րդ նիստը փակուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր աղօթքով:

